Գործարար համալիրի կառուցման ներդրումային ծրագիր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Արաբկիր վարչական շրջանում՝ Թբիլիսյան խճուղու և Հրազդանի կիրճ տանող ճանապարհի հատման հատվածում կառուցել առևտրային և գործարար կենտրոն: Կենտրոնն ունենալու է հավասարակողմ եռանկյունու տեսք՝ 5 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկերով: Արտաքին հարդարանքի համար նախատեսված է տուֆ և հայելապատ կապույտ ապակիներ:

Նախատեսվում է նաև պահեստային տարածքների և ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցում: Կբարեկարգվեն նաև շենքին հարող տարածքները:

Տեխնիկական ցուցանիշներ

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 13950քմ, որից առևտրային տարածք՝ 8500քմ, գրասենյակային տարածք՝ 1650 քմ, տանիքի մակերես՝ 1900 քմ, ավտոկայանատեղի – 1900 քմ: Հողային տարածքի մակերեսը կազմում է 4251քմ:



Ծրագրի ժամկետներ	Ծրագրի իրականացման ժամկետը՝ շուրջ 4 տարի:
Ծրագրի արժեքը	Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 12 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի կողմից:
Ներկա իրավիճակ	Առկա են ճարտարապետահատակագծային փաստաթղթեր: Համալիրի կառուցման գրունտային աշխատանքները մինչև հիմնատակ ավարտված են: